

# ՔԱՐՈՉ ԽՈՍՎԿԱՆ

Տ. ԳՐԻԳՈՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ  
ՔԱՐՈՉԸ ԽՈՍՎԱԾ Մ. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱճԱՐՈՒՄ  
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ  
ՃԻՄԱԳԴՐՈՒԹՅԱՆ 130-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ  
ՄԱՏՈՒՅՎԱԾ Մ. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(3 նոյեմբերի 2004 թ.)

«Տուա ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի, որպէս առաքեաց զիս Տայր և Ես առաքեամ զանգ: Գնացեք այսուհետեւ՝ աշակերտեցեք զամենայն հեթանոս. մկրտեցեք զնոսա յանոն Նօր և Որդույ և Հոգույն Սրբություն: Ուսուցեք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պարուիրեցի ձեզ: Եւ ահասախկ Ես ընդ ձեզ եւ զամենայն ասուրս՝ մինչեւ ի կարարած աշխարհի»:

(Մատթ. Ի. 18-20)

«Յանուն Նօր և Որդույ և Հոգույն Սրբոյ. ամէն»:

Շնորհազարդ Վեհափառ Նայրապետ, Ձերդ Սրբություն S.S. Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Տայոց,

Գերաշնորհ սրբազան եղբայրներ, բարձրապատիվ և հարգելի ներկայացուցիչներ հայ մրգավորականության, զիտուրայան, մաքի և մշակույթի, ուխտյալ և զինվորյալ միարանություն Մայր Վառո Սուրբ Էջմիածնի, սիրելի տիեզական և դասախոսական կազմ Գևորգյան Հոգևոր ճեմարանի, սիրելի սաներ և սիրելի ժողովորդ,

Նախ փառք եմ փալիս Աստծուն և երախսագիտություն եմ հայրնում Վեհափառ Նայրապետին՝ այս կարևոր փարենշումի ատիթով կապարվող Ս. Պատարագի մագուցումն ինձ վերապահելու համար: Ապա՝ ողջունում եմ բոլորի ներկայությունը: Արդարեւ, բազմանշանակ ու բազմախորհուրդ է Գևորգյան ճեմարանի 130-ամյա փարեղարձի այս հանդիսավոր նշումը, և այս պահին, համախորհուրդ ու միարան, բոլորս նկել ենք Ս. Էջմիածնի Մայր Տաճարի այս սրբազան կամարների ներք մեր հարգանքի դրություն մագուցելու այս վեհ հասկապությանը ու նրա կապարած նվիրական գործին:

Ինչո՞ւ ուզեցի որպես բնարան հիշեցնել Քրիստոսի վերջին պատգամը: Այն պատճառով, որ աշխարհով մեկ սփռված բոլոր քրիստոնյա Եկեղեցիներն ունեն հոգևոր դպրոցներ, որոնց բոլորի հիմնական նպատակն ու աշխարհանքն է իրականացնել աստվածային այդ պատգամը: Քրիստոս Իր աշակերդներին առաքեց աշխարհով մեկ՝ փարածելու համար Իր աստվածաքարող ճշմարիկ ուսմունքը և վեհ հավադրը: Նրանցից երկուսը՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալները, եկան Տայաստան, և զույգ առաքյալների քարոզությամբ

և U. Գրիգոր Լուսավորչի հավաքրով Հայաստանը դարձավ քրիստոնյա, իմանադրվեց ու կազմակերպվեց Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցին Կաթողիկոսական Աթոռի Ս. Էջմիածնում հասպագումով: Այս շրջանից է սկսեց զործել նաև Կաթողիկոսարանին կից, հայրապետական հոգածության ներքո, հոգևորականներ պատրաստող դպրոցը, որն առ այսօր շարունակում է իր արդյունաշար կրթական գործունեությունը: Այսօր այդ դպրոցի ուղիղ շարունակությունը Ս. Էջմիածնի Հոգևոր Ծեմարանն է, որն ավելի քան 1700 տարիներ Ամենայն Հայոց Հայրապետության կողքին ու նրա հովանու ներքո իր հոգևոր սպասարկությունն է մարդուցու Հայաստանյաց Եկեղեցուն ու հայ ժողովրդին:

Տեղին է հարկապես նշել և ընդգծել, որ բոլոր ժամանակներում Հոգևոր Ծեմարանը նեղել է հայ ժողովրդի գորգուրանի առարկա՝ վայելելով ժողովրդի ու նրա բազմաթիվ արժանավոր զավակների բարյական ու նյութական աջակցությունը որպես արդահայտություն Ավելարանի ուսուցման ու Հայ Եկեղեցու գործունեության նկարմամբ նրանց նվիրման ու գնահատանքի: Խոկ հոգևոր կոչմանն արձագանքած ու Եկեղեցական ասպարեզ ընդգրկված ճեմարանավարդներ անգնահատելի ծառայություն են մարդու մեր ժողովրդին՝ իրենց հոգևոր առաքելությանը զուգահեռ կարարելով նաև մանկավարժական, ուսումնադասարդարական աշխատանք, նպաստելով հայ դպրոցի ամուր ու կենսունակ պահպանմանը և սպասավորելով հայ մշակույթին:

Բոլոր ժամանակներում կրոնական բոլոր դպրոցները նույն հավաքրով ու սևուումով միևնույն գործն է, որ կադարձել ու շարունակում են կադարձել, այն է՝ պատրաստել Եկեղեցական նվիրյալ գործիչներ: Դեռք է մշտապես մարդակարարվել սուրբ գործի նվիրյալներ՝ սկսած Եկեղեցու գահակալից մինչև նրա ամենախոնարի սպասավորը, որպեսզի Զրիսպուսի անկորնչելի պարզամբ հնչի անընդհափ շարունակականությամբ:

Ս. Էջմիածնի ավանդական հոգևոր դպրոցի նոր վերակազմակերպմամբ և նրա՝ Գևորգյան Հոգևոր Ծեմարան վերանվանումով սկսվեց Հայ Եկեղեցու մայր կրթարանի մի նոր շրջանի վերանորոգված գործունեությունը: Դա դեռի ունեցավ, որովհետև այդ պահին մեր Եկեղեցու առաջնորդ գործիչներն արդեն վաղուց գիտակցում և գգում էին ճեմարանի առավել ևս զորացման պահանջն ու կարևորությունը նրա բուն առաքելության կարարման՝ Ավելարանի քարոզիչների և Եկեղեցական գործիչների պատրաստման համար: Անհրաժեշտ էր, որ ճեմարանական հարկից դուրս գային ավելի թվով և առավել հմուտ, առաքելության բարձր գիտակցություն ու կոչում ունեցող Եկեղեցականներ՝ մարդակարարելու համար հայ հավաքացյաների հոգևոր կարիքները:

Զայած որ առաջին փասնինք փարփա ընթացքում ճեմարանի շրջանավարդներից և ոչ մեկը ընդգրկվեց Եկեղեցական ասպարեզ և չստացավ հոգևոր աստիճան, սակայն սկսած 1890-ական թթ. ընդհուպ 1917 թ., շուրջ երեք փասնամյակ, արդյունավետության իմաստով, Մայր Վթոռի և Գևորգյան ճեմարանի պատրմության մեջ արձանագրվեց հազվագիտորեն վերելքային ու առաջընթացի մի շրջան: Հոգևոր ասպարեզ ընդգրկված ճեմարանականները, հակառակ դրան, մեծ ծառայություն մարտուցեցին հայ կրթական կյանքին՝ ուսուցչական պաշտոնի անցնելով մանավանդ Հայաստանի, Կովկասի և Ռուսաստանի թեմական, ծխական կամ մասնավոր վարժարաններում: Խոկ Եկեղեցական աստիճան սրացողների մեջ եղան այնպիսի ականավոր դեմքեր, որպիսիք են Կոմիտասը, Կարապետ

եախսկոպս Տեր-Սկրիբյանը, Գարեգին Կաթողիկոս Շովամիյանը, Գևորգ Չ Կաթողիկոս Չորեցյանը, Մեսրոպ Մագիստրոսը, Երվանդ Տեր-Մինասյանը և շաբ ուրիշներ: Ասպարագաների, Ս. Գրիգոր մասնագետների, հայագետների, կանոնագետների, արվեստաբանների, ծեռագրագետների, պատմաբանների, բանականների մի հոլոյ, որոնք նպաստեցին զիւկան բոլոր այս բնագավառների աննախընթաց զարգացմանն ու վերելքին:

Վյաջիսով, 1890-ական թվականներից Գևորգյան ճեմարանը մինչև իր փակվելը գերազանցորեն է կարողանում կարարել իր բուն առաքելությունը, քանի որ հոգևոր-գիրական տարրեր բնագավառներում հմտացած ու հոչակ նվաճած այդ եկեղեցականները նվիրվում են եկեղեցակազմակերպչական և զիւկամանկավարժական գործունեությանը: Խոկ դարձյալ ճեմարանավարդ բազմահարյուր քահանաներ մեկնելով Հայոց աշխարհի ամենախուլ գյուղերը, փայլուն կերպով իրականացնում էին ծխական հոգևոր հովվի երախտաշապ ու ասպարագան սպասավորությունը:

Արժան է հիշագույնի, որ այդ նոյն ժամանակահավիքածում Հայ Եկեղեցին բախտ ունեցավ Կ. Պոլսու հայոց Պարքիարքության հովանու ներքո հիմնադրելու Արմաշի հոգևոր դպրանոցը, որի շրջանավարդ լուսամիտ և հավագավոր եկեղեցականները մեծ հաջողությամբ կարողացան նոյնանման առաքելություն կարարել ողջ Արևմբահայաստանի դրաբածում: Նրանց մեծ մասը մինչև վերջ մնալով ժողովրդից անբաժան, զոհ դարձավ Մեծ Եղենին: Խոկ վերապրողներից շատերը բախսրորդ դերակարպություն ունեցան հետեւունան Սփյուռքի եկեղեցական կառույցների սպեկուման ու կազմակերպման գործում համախմբվելով նախ Երևանադիմի հայոց Պարքիարքության շուրջ, ապա ընդարձակելով իրենց գործունեությունը Մերձավոր Արևելքի երկրներում, Ամերիկայում և Եվրոպայում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինության ներքո:

Վերադառնայով Գևորգյան ճեմարանի գործունեությանը, ասենք, որ ճեմարանն այնպես էր թրծում հոգիները, պատրաստում ու կազմակորում միքերն ու սրբերը, որ նրա շրջանավարդ սաներն անմնացորդ նվիրումով էին կարարում իրեց սպաննենած առաքելությունն ու աշխարանքը:

Հայունի է, որ Գևորգյան ճեմարանի շաբ շրջանավարդներ հայ ազարագրական ողջ շարժման ընթացքում իրենց մադրա կյանքը ընծայաբերեցին Հայրենիքի գոհասեղանին: Նրանցից շատերն էլ գործուն մասնակիցներից ու կերպիչներից հանդիսացան Սարդարապարի հերոսամարտի և 1918-1920 թթ. Առաջին Հանրապետության, ապա Խորհրդային շրջանի պետքական կառույցների ծնավորման և գործունեության:

Ունենալով Մայրավանքում գինվելու պատրեհությունն ու երջանկությունը, ճեմարանն առաջնահերթորեն է միշտ վայելել Հայոց Հայրապետների մշտական ուշադրությունն ու գործուրանքը: Որպես գույխ Եկեղեցվո՞ն Հայրապետները միշտ նպատակադրել են մեր ժողովրդին ու հավաքացյաներին պարզել լավ պատրաստված, հավաքավոր ու նվիրյալ հոգևոր գործիչներ ու քարոզիչներ: Վյո հանձնառու մովեցումն ու կեցվածքը շարունակվում է նաև այժմ:

Նման մտորումներով ինչպես կարող ենք այս պահին համագումար ներկաներս, այնպես, ինչպես մեր ողջ Եկեղեցին ու ժողովուրդը, չխոնարհելով Գևորգ Դ Կաթողիկոսի հիշարակի, նրա թողած գործի ու վասպակի առաջ: Զգնահարել, շնորհակալ ու երախտագետ

չինել հաջորդող մյուս բոլոր Հայրապետների վերաբերունքի նկարմամբ հանդեպ Հայաստանյաց Եկեղեցու այս թրծարանը:

Առանձնահարուկ ընդգծվածությամբ ցանկանում եմ հիշարժակել երկու երախուաշափ մեծանուն Հայրապետների՝ Գևորգ Զ Չորեցյան և Լազգեն Ա Կաթողիկոսների վճռորշ դերը Ծեմարանի վերաբացման և հաջորդող փասնամյակների վերելքի գործում:

Հազար փառք Ապրուծո, այսօր շար բարենպաստ պայմաններում շարունակում է իր արգասարեր գործունեությունը Ս. Էջմիածնի վերաբերին Գևորգյան անվանյալ Հոգևոր Ծեմարանը, այժմ արդեն բարձրագույն ուսումնական հասկարության կարգավիճակով:

ԹՎարկված առանձնահարկություններին գումարվել է նաև այն բարեպատճեն հանգամանքը, որ այժմ Ս. Գրիգոր Լուսավորչի գահին արժանապես բազմել է մեր ժամանակների ետանդուն ու ժրաշան Հայրապետը՝ Նորին Սրբություն S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ փողորված միևնույն հավաքով ու նախանձախմնդրությամբ, Ավելարանի փարածման նույն մրահողությամբ, Հայ Եկեղեցին գորացնելու նույն վճռակամությամբ: Եվս մեկ հանգամանքը: Եթե ժամանակին Հայաստանում Գևորգյան Ծեմարանը միակն էր, ապա այսօր նրա հետը միասին գործում են Սևանի ու Շիրակի նրա կրթսեր հոգևոր դպրոցները: Նրանք ևս պատված են հայրապետական նույն խնամքով ու հոգածությամբ:

Նոգևոր-կրթական նման նպատակաուղղված գործունեությունը նրա համար է, որ մեր Եկեղեցին ու Եկեղեցական դասը կարողանան հավաքարիմ գինվել Քրիստոսի սրբազն պարզամին, սիրով սրբանձնել ու սրբությամբ կարտարել այդ պարզամը, որպեսզի հոգևոր դպրոցների ուսումնական հարկերից դուրս եկած, հավաքով ու գիտելիքներով զինված ու թրծված Եկեղեցականներ, բոլորս, պատրաստ լինենք դարաձվելու մեր ժողովրդի մեջ մինչև ամենահեռու վայրերը, լոյս-հավաքը դանել-բաշխելու այնքեզ: Որպեսզի Ս. Էջմիածնի, Հայաստանյաց Եկեղեցու, քրիստոնեական մեր սուրբ հավաքը սիրո շաղախով շաղախված հավաքարիմ նվիրումով հնարավոր լինի կրթել և ուսուցանել, միսիթարել ու միավորել մեր ժողովրդին Ավելարանի ու նախնյաց այդ սուրբ հավաքի մեջ:

Ուրախություն է նաև, որ մեր Եկեղեցու կրթական հասկարություններ կան ոչ միայն Հայաստանում, այլ նաև Հայրենիքից դուրս, որոնց մեջ պատրաստվում են նոյն նպատակին նվիրված լուսավոր, մարդար հոգիներ: Դրանց անդրանիկը Երուսաղեմի Ս. Տակորյանց ժառանգավորացը և ընծայարանն է: Անյիլասի դպրեվանքը և Կոստանդնուպոլսու Պարիփարքության փոքրիկ, բայց նոյնքան կարևոր հոգևոր դպրանոցը: Խոկ Ամերիկյան ցամաքամասում իր ծրածան աշխափանքն է կարտարում Միացյալ Նահանգաց Արևելյան թեմի Ս. Ներսես Շնորհալի ընծայարանը:

Այս բոլորն անվերապահ իրավունք են դալիս մեզ ասելու, որ Հայ Եկեղեցին գերազանցորեն գինվում է իր առաքելության վավերական կոչման մեջ, քանի որ հավաքարմությամբ է կարտարում Հիսոսի ավանդած ասպարագային պարզամը:

Գևորգյան Ծեմարանի հոբելյանական դուռակարաբության այս պարճեն առիթով ուրախության, գոհունակության ու հսկարդության հետը մնկվել մեզ մնում է վերագիտակցել ու վերարժեվորել այս բոլորը: Ապա վերահասկարել մեր համոզումը, որ Հայ Եկեղեցին հայ ժողովրդի ու հավաքացյալների համար հանդիսանում է հոգևոր ու հայրենասիրական այն ապահով նավը, որն ընթանում է ասդպարագային ծրագրի ու գնորինության համաձայն: Խոկ

Եկեղեցականներս կրողներն ենք Ավելիարանով Ասպուծո նախասահմանած ճշմարդությունների, որոնց իրականացմանը պիտի շարունակենք ծառայել անշնորթեն:

Այս այս մրածումներով ցանկանում ենք մեր խոսքը ուղղել Գևորգյան ճեմարանի և բոլոր հոգևոր կրթարանների մեր սաներին:

Միրելի ուսանողներ, շնորհ ու պատեհությունն է, որ, արձագանքելով Ասրուծո գինօրինությամբ ձեզ շնորհված կոչման ծայնին, դուք ընդունել եք հոգևոր ասպարեզում ծառայելու ոժվարին, բայց օգտակար ու պարփակվոր առաքելությունն ու ճանապարհը: Կրթական ձեր օջախներում դուք այսօր պատրաստվում եք, որպեսզի վաղը դառնաք քարոզիչներ, հովիվներ: Այսինքն՝ ժողովրդի սպասավորներ ու հոգևոր լուսաբուներ: Ժողովուրդն այսօր մեծ կարիքն ունի հոգևոր մագակարարման թե՛ Շայասփանում, թե՛ Շայասփանից դուրս: Նա պահանջում է հոգևոր սնունդ: Վաղը դուք է, որ պիտի ստանձնեք դարերով սերնդեսերունդ փոխանցվող հավաքի շահը, պիտի փորձեք դիմագրավել Եկեղեցու առջև ծառացող մարդարավերներին ու ձեր կյանքով ու գործով պիտի պարասխան գրնեք այդ հարցադրումներին:

Ուրեմն ձգիեք ուսումնառության դարիներն օգտագործել ամբողջական արդյունավելությամբ և ձեր անձերը պատրաստել Ասպուծո Սուրբ Սեղանի առաջ կարարյալ սպասարկության համար:

Թողղ Ասպված օրինի ձեզ և ձեր անձերի ընծայաբերումը ընդունելի դարձնի Իր Սուրբ Գործի համար:

Թողղ Ասպված ապահով ու հասպարուն պահի Ս. Էջմիածնի Գևորգյան Դոգևոր ճեմարանը՝ իր գրեսչական, դասախոսական և ուսանողական կազմով առաջնորդելով այն դեպի նորանոր բարձունքներ:

Թողղ Ասպված անսասան պահի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Շայասփանյայց Առաքելական Ս. Եկեղեցին՝ արևաշար ու երջանիկ գահակալական առաջնորդությամբ Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ Ամենայն Շայոց Կաթողիկոսի՝ ի փառ Սուրբ Երրորդության և ի վայելումն մեր ժողովրդի:

**«Ծեորիք, սեր և խաղաղութիւն Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեւսեանդ ամէն»:**